Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 սեպտեմբերի 2024 թվական ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-13/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ անձնակազմի նորմատիվային թվաքանակի հաշվարկ և հիմնավորում» ծառայության ձեռք բերման նպատակով 2024 թվականի հուլիսի 11-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-13/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գլոբալ Սուփորթ» ՍՊ ընկերությունը: Փաստաթղթերի գնահատման արդյունքում «Գլոբալ Սուփորթ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել ««ՀԱԷԿ» ՓԲԸ անձնակազմի նորմատիվային թվաքանակի հաշվարկ և հիմնավորում» ծառայության մատուցման պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնակցին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, սակայն «Գլոբալ Սուփորթ» ՍՊ ընկերությունն այդպես էլ չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը, ինչպես նաև՝ որակավորման և պայմանագրի ապահովումները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: ...»:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Գլոբալ Սուփորթ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**